ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

Ի ԼՐՈՒՄՆ ԼՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

*Ք. Ալավերդի* *02.12.2019թ*

Ալավերդու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Սասուն Խեչումյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՏԱ առևտրի տուն>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խառատյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Մատակարար), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկա

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետը և Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ կա անհրաժեշտություն պայմանագրով նախատեսված մի ապրանքը փոխարինել մեկ այլ ապրանքով, որը կհանգեցնի պայմանագրի արդյունավետ իրականացմանը՝ համաձայնագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

1.2 Հաստատել պայմանագրի նախատեսված ապրանքի մատակարարման նոր տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը (պայմանագրի Հավելված -ը)՝ Հավելված 2:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունները, ինչպես նաև Համաձայնագրից բխող բոլոր հարցերը լուծվում են երկկողմ բանակցությունների ճանապարհով, համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Սույն Համաձայնագիրը գործողության մեջ է մտնում ստորագրման պահից, հանդիսանում է ԼՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը և գործում է ժամանակացույցին համապատասխան:

2.3 Պայմանագրի ՝սույն համաձայնագրում չնշված կետերը մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 N 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզ, Ալավերդու համայնքապետարան | ՀՀ Լոռու մարզ, ք Ալավերդի |
| Զորավար Անդրանիկի 81 | Թումանյան փող.20 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության Գործառնական վարչություն | <<Կատա առևտրի Տուն>> ՍՊԸ |
| h/h 900262121107 | <<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ, Թումանյան մ/ճ |
| ՀՎՀՀ 06954208 | h/h 163188100081 |
| Սասուն Խեչումյան | ՀՎՀՀ06935626 |
| | Տնօրեն՝Ա. Խառատյան |
| ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված 1

02.12.2019թ. կնքված Համաձայնագիր 2-ի

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Սննդամթերքի անվանումը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ենթակա է ավելացման /կգ/ | Ենթակա է նվազեցման /կգ/ | Ենթակա է ավելացման /ՀՀ դրամ/ | Ենթակա է նվազեցման /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կարագ | 3000 | 11,0 | 0 | **33000,0** | **0** |
| 2 | Ընտանի թռչունների միս | 1800 | 40,3 | 0 | **72595,1** | **0** |
| 3 | Խնձոր | 400 | 0 | 328,0 | **0** | **131196,7** |
| 5 | Հնդկաձավար | 340 | 65,0 | 0 | **22099,4** | **0** |
| 6 | Բրինձ | 420 | 111,0 | 0 | **46620,0** | **0** |
| 7 | Վարսակի փաթիլներ | 570 | 0 | 0 | **0** | **0** |
| 8 | Գազար | 300 | 0 | 22,0 | **0** | **6600,0** |
| 9 | Բազուկ | 300 | 4,0 | 0 | **1200,0** | **0** |
| 10 | Կաղամբ | 190 | 0 | 198,5 | **0** | **37717,7** |
| **Ընդամենը** | | | | | **175514,5** | **175514,4** |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Լոռու մարզ, Ալավերդու համայնքապետարան
Զորավար Անդրանիկի 81
ՀՀ Ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
h/h900262121107
ՀՎՀՀ06954208
Սասուն Մեժլումյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ Լոռու մարզ, ք Ալավերդի
Թումանյան փող.20
<<Կատա առևտրի Տուն>> ՍՊԸ
<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ,
Թումանյան մ/ճ
h/h 163188100081
ՀՎՀՀ06935626
Տնօրեն՝Ա.Խառատյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«  02 »   12.   2019թ. կնքված
Համաձայնագիր 2-ի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավեր ով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարում | | |
| | | | | | | | | Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ |
| 1 | 15531100/1 | կարագ | Սերուցքային, յուղայնությունը՝82,5%-82,9%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0.7 գ, ածխաջուր 0,7 գ, սպիտակուցներ՝ 0,6 % 740 կկալ, ԳՕՍՏ 37-91 : Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված | կիլոգրամ | 3000 | 1936800,0 | 645,6 | Ալավերդի համայնք՝ Պապվիրա փուի փրամադրած հասցեների | 645.6 | պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |
| 2 | 15112110/1 | ընտանի թռչունների միս | Հավի կրծքամիս առանց ոսկորի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կիլոգրամ | 1800 | 1190825,6 | 661,6 | Ալավերդի համայնք՝ Պապվիրա փուի փրամադրած հասցեների | 661.6 | պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |
| 3 | 03222128/1 | խնձոր | Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված 'Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի' և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կիլոգրամ | 399.99 | 1009534,8 | 2523,9 | Ալավերդի համայնք՝ Պապվիրա փուի փրամադրած հասցեների | 2523.9 | պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |
| 5 | 15616000/1 | հնդկաձավար | Հնդկաձավար առաջին տեսակի, խոնավությունը՝ 14.0% -ից ոչ ավելի, հատիկները՝ 97.5% ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված 'Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի' և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կիլոգրամ | 339.99 | 649618,9 | 1910,7 | Ալավերդի համայնք՝ Պապվիրա փուի փրամադրած հասցեների | 1910.7 | պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |
| 6 | 15614200/1 | բրինձ | Սպիտակ, խոշոր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված 'Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի' և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կիլոգրամ | 420 | 772002,0 | 1838,1 | Ալավերդի համայնք՝ Պապվիրա փուի փրամադրած հասցեների | 1838.1 | պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |
| 7 | 15613350/1 | վարսակի փաթիլներ | Վարսակի փաթիլներ, չափածրարված սպիտարաթղթե տուփերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կիլոգրամ | 570 | 22800,0 | 40,0 | Ալավերդի համայնք՝ Պապվիրա փուի փրամադրած հասցեների | 40 | պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 03221110/1 | գազար | Սովորական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կիլոգրամ | 300 | 170310,0 | 567,7 | Հասցե<br>Ալավերդի համայնք՝ Պատվիրատուի տրամադրած հասցեների | Ենթակա քանակներ<br>567.7 | Ժամկետներ<br>պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |
| 9 | 03221100/1 | բազուկ | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%: | կիլոգրամ | 300 | 111120,0 | 370,4 | Հասցե<br>Ալավերդի համայնք՝ Պատվիրատուի տրամադրած հասցեների | Ենթակա քանակներ<br>370.4 | Ժամկետներ<br>պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |
| 10 | 03221410/1 | կաղամբ մաքրած | Վաղահաս, միջահաս,ուշահաս, արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված 'Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի' և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կիլոգրամ | 189.99 | 525018,4 | 2763,4 | Հասցե<br>Ալավերդի համայնք՝ Պատվիրատուի տրամադրած հասցեների | Ենթակա քանակներ<br>2763.4 | Ժամկետներ<br>պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ը |

*1. Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների փաստացի թվաքանակը: 2. Ընդունել ի գիտություն, որ պայմանագիր կնքելուց հետո Վաճառողը, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում, ըստ անհրաժեշտության և մատակարարումն իրականացնի նույն օրենքի 16-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: 3. Մատակարարումն իրականացվում է սննդի և սննդամթերքի մատակարարման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան: 4. Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի /Ստացողի/ կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ կապի այլ միջոցներով: 5. Մատակարարումն իրականցվում է գնորդի /կամ նրա կողմից որոշված ստացողների/ հետ համաձայնեցված ժամին/երին/: 6. Մատակարարում իրականացնելիս «Վաճառողին» կտրամադրվի նախատեսված սննդամթերքի չափաքանակների բաշխացուցակ «Գնորդի» կողմից որոշված Ստացողներին հատկացված ծավալների վերաբերյալ, որին համապատասխան էլ պետք է իրականացվի մատակարարումը: 7. Մատակարարումն իրականացվում է ՎԱՃԱՌՈՂԻ միջոցների հաշվին՝ Հավելված 1–ում նշված հասցեներով: 8. Պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է վերոնշյալ ապրանքի(ների) համար: Ընդ որում, յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փաթեթավորման վրա պետք է մակնշված լինի արտադրության ժամկետը, պահպանման ժամկետը, օրենքով սահմանված այլ տեղեկատվություն: Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն: 9. Սննդամթերքը պետք է փաթեթավորված լինի սննդի և սննդամթերքի փաթեթավորման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան: 10. Ապրանքի(ների) պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին պետք է լինի սահմանված ժամկետի 75 %-ից ոչ պակաս: 11. Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Վճարումը՝ ըստ մատակարարման:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Լոռու մարզ, Ալավերդու
քաղաքապետարան
Զորավար Անդրանիկի 8Ա
ՀՀ Ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
900262121107
06954208
Սասուն Խեչումյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ Լոռու մարզ, ք Ալավերդի
Թումանյան փող.20
<<Կատա առևտրի Տուն>> ՍՊԸ
<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ,
Թումանյան մ/ճ
հ/հ 163188100081
ՀՎՀՀ06935626
Տնօրեն՝Ա.Խառատյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ